

ԱՐՇԱՄ ԽՈՆԴԿԱՐԵԱՆ

## ՕՊՈՉԻՑԻԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

## III

«ԱՆՁԵՒ ՔԱՕՍԻ» ՄԷՁ

Յեղափոխական շրջանի ատանձնայատկութիւններից մէկն էլ այն է, որ դէպքերը այդ ժամանակ զարգանում են շարժանկարի արագութեամբ, ստեղծելով ամենակարճ տեւողութեան ընթացքում նորանոր այնպիսի կացութիւններ, որոնցից յաջորդը շատ յաճախ որևէ նմանութիւն չունի նախորդի հետ: Այդպիսի մի կացութիւն ստեղծուեց նաև հայ ժողովրդի կեանքում 1918 թ. յուլիսին, երբ Թիֆլիզից Երեւան հասաւ Ազգային Խորհուրդը ու ձեռնարկեց պետական ինքնուրոյն շէնքի կառուցման: Հայ քաղաքական կեանքի կենտրոնը, որ մինչև այդ գտնուում էր Թիֆլիզում, փոխադրեց Երեւան՝ «հայկական գաւառների» մայրաքաղաքը, եւ դրա հետեւանքով տեղի ունեցաւ համապատասխան լծորդում այն կազմակերպւած ուժերի, որոնք վերջին շրջանում գործում էին Թիֆլիզում եւ Երեւանում՝ միմեանցից համարեա թէ անջատ:

Ինչպէս կատարեց այդ լծորդումը:

«Տիեզերական» Դաշնակցութեան արեւելահայ հատուածը իր կազմակերպութիւնները ունէր լայնածաւալ Ռուսաստանի այն բոլոր վայրերում, որտեղ հայ բնակչութիւն կար: Ամենաուժեղ ցանցը, անշուշտ, ծաւալւում էր «հայկական գաւառներում»՝ Երեւանի շուրջը: Ինչ վերաբերում է կուսակցութեան կենտրոնին, նա յեղափոխութեան ամբողջ տեւողութեան ընթացքում գտնուում էր Թիֆլիզում, որտեղ նստած էր Դաշնակցութեան Բիւրօն ու լոյս էր տեսնում նրա պաշտօնաթերթ «Հորիզոն»ը: 1918 թ. յուլիսին, Ազգային Խորհրդի Երեւան փոխադրելու հետեւանքով, Դաշնակցութիւնը այնտեղ ուղարկեց համարեա իր բոլոր պատասխանատու գործիչներին՝ թողնելով Թիֆլիզում, սակաւ բացառութեամբ, «Աշխատաւոր»-ի շուրջը

համախմբւած այն երիտասարդներին, որոնք գլխաւորեցին Վրաստանի կազմակերպութիւնը: Դաշնակցութիւնը, այսպիսով, մնաց հաւատարիմ նաեւ այս անգամ իր լուսագոյն աւանդներին՝ լինել ժողովրդի հետ:

Երեւանում, որտեղ յեղափոխութիւնը նոյնպէս բոլորել էր իր շրջանը, անցնելով Թիֆլիզից մի քիչ տարբեր փուլերով, Դաշնակցութիւնը ունէր ուժեղ կազմակերպութիւն եւ բազմաթիւ պատասխանատու գործիչներ: Նրանք ղեկավար դեր էին կատարում այն մարմինների մէջ, որոնք վարում էին սկզբում յեղափոխութեան եւ ետքը՝ ազգային գործերը: Հակառակ դժգոհութիւն արտայայտող այն դիմումներին, որ ամենալերջին շրջանում, Երեւանի հատուածը անում էր Թիֆլիզին անմիջապէս Հայաստան փոխադրելու մասին, հանդիպումը եւ լծորդումը «եկւոր» ու «տեղացի» գաշնակցականների միջեւ կատարուեց առանց որեւէ անհարթութեան: Կանոնաւոր ձեւով ընտրւած կուսակցական մարմինների գոյութիւնը կատարեց իր դրական դերը նաեւ այս դէպքում, եւ Դաշնակցութիւնը, առաջին իսկ օրից, չհանդիպելով որեւէ դժարութեան, գործի դրաւ իր ապարատը, որի մէջ - վերից վար - ճշտւած էին բոլոր օղակների պատասխանատուութիւններն ու իրաւասութիւնները: Սա մի հսկայական առաւելութիւն էր, որ վիճակւած էր միայն Դաշնակցութեան, եւ որից զուրկ էին մեր միւս կուսակցութիւնները, դէթ սկզբնական շրջանում:

Երկրորդ քաղաքական խմբակը՝ Ժողովրդականները ցուցահանեցին մի այնպիսի վարքագիծ, որ որեւէ քննադատութեան չի դիմանում: Յաւակնոտ ու անհիմն պահանջներից յետոյ՝ յանձնել իրենց հայ քաղաքական կեանքի ղեկավարութիւնը ու կառավարութիւն կազմելու իրաւունքը, նրանք, երբ պէտք եղաւ գնալ Երեւան, լքեցին իրենց պարտականութիւնները ամենախայտառակ կերպով: Կուսակցութեան բոլոր ղեկավարները մնացին Թիֆլիզ, եւ «հայկական դատաւանները» ուղարկւեցին երկու վարժապետներ (Ստեփան Մալխասեան եւ Արշալոյս Մխիթարեան), որոնք իրենց հայրենասիրական առաքինութեան ու անհատական այլ արժանիքներին, աւա՛ղ, չէին միացրնում քաղաքական ու կուսակցական ղեկավարից պահանջող անհրաժեշտ փորձառութիւնն ու հմտութիւնը: Այս ճախող քայլի բացասական նշանակութիւնը է՛լ աւելի էր խորանում նրանով, որ Երեւանում դանուղ ժողովրդականները բոլորն էլ երկրորդ կարգի գործիչներ էին եւ - է՛լի մի դժբախտութիւն - չէին կարողացել մինչ այդ ո՛չ միմեանց հետ ներգաշնակւել եւ ո՛չ էլ կուսակցական կանոնաւոր կազմակերպութիւն առաջ բերել:

Բայց Թիֆլիզեցիները կատարած սխալը միայն վերոյիշեալով չասհմանափակեց: Պարոնայք Ս. Յարութիւնեանները, Մ. Բարաջանեանները, Բ. Վերմիշեաններն ու Լ. Ղուլեանները, մշտնով հանդերձ Թիֆլիզում, շարունակեցին իրենց ձեռքում պահել կուսակցութեան կենտրոնական մարմնի իրաւասութիւնները եւ այդ հիման վրա նաեւ Հայաստանի իրենց ընկերների գործունէութեան ղեկավարութիւնը: Այս հանգամանքը ճակատագրական նշանակութիւն ունեցաւ ժողովրդական կուսակցութեան ապագայի համար: Քաղաքական աջախիսի մի պայմաններում, երբ դէպքերը զարգանում էին գլխաւորոտ յատճառող արագութեամբ, երբ համարեա ամէն օր ամենաբազմ լուծում պահանջող նոր ու ծանրակշիռ ինդիւրներ էին դրուում խորհրդարանային հատուածների ու կուսակցական լիազօր մարմինների առաջ, երբ, վերջապէս, գրեթէ կտրւած էր հաղորդակցութիւնը Թիֆլիզի եւ Երեւանի միջեւ, վերոյիշեալ որոշումը դրական որեւէ օժանդակութիւն չընձեռոյով հանդերձ Երեւան գործող ժողովրդականներին, կապում էր այս վերջինների ձեռք ու ոտքը եւ կաշկանդման ենթարկում նրանց ամբողջ գործունէութիւնը: Եթէ ժողովրդական կուսակցութիւնը, որ արմատ ձգելու համար համապատասխան հող ունէ՛ր՝ հայ իրականութեան մէջ, չկարողացաւ մըշակել որոշ ուղեգիծ եւ չգրաւեց հաստատուն դետին Հայաստանում ու վերջն էլ՝ մէկը միւսի յետեւից գործած սխալների հետեւանքով՝ հեռացաւ հայ քաղաքական կեանքի ասպարէզից, սպա դրա գլխաւոր պատճառներից մէկը վերը մատնանշած սխալն էր:

Ժողովրդականներից շատ բանով շտարբերեց եւ հայ սոցիալ-դեմոկրատների բռնած դիրքը: Նրանց պարագլուխները նոյնպէս մըշանացին Թիֆլիզ եւ Երեւան ուղարկեցին գործնական քաղաքականութիւն վարելու միանգամայն անհմուտ մի գործիչ (Հայկ Աղատեան), որ իր անտակտութեամբ ու դոկտրինետօրութեամբ շատ կարճ ժամանակում վերջնականապէս վարկաբեկեց իր կուսակցութեան գործը Հանրապետական Հայաստանում: Թիֆլիզից չբաժանելու անյաղթահարելի ցանկութիւնը մոռացնել տաւ Ա. Երզնկեանին, Ա. Զոհրաբեանին, Ղ. Տէր-Ղազարեանին, Ս. Փիրումեանին եւ ընկերներին այն կարեւոր պարագան, որ «հայկական դաւառները» հողը ախքա՛ն էլ պարարտ չէր սոցիալ-դեմոկրատիայի համար, որ, դրա հետեւանքով Հայաստանում գոյութիւն ունեցող նրանց կազմակերպութիւնը շատ թոյլ էր ու խեղճ եւ որ նա իրեն բաժին ընկած գերը բաւարար չափով կատարել կարենալու համար պէտք ունէր փորձ ու հեղինակաւոր առաջնորդների, որպիսիք կային Թիֆլիզում, բայց չկային Ե-

րեանում: Սրա վրա աւելացաւ նաև այն, որ սոց. — դեմոկրատները կրկնեցին ժողովրդականների կատարած սխալը եւ, մնալով Թիֆլիզ, պահեցին իրենց ձեռքում կենտրոնական մարմին իրաւասութիւնները եւ Հայաստանի իրենց կազմակերպութեան ու խորհրդարանային ֆրանկցիայի գործունէութեան ղեկավարութիւնը: Այս հանգամանքը նրանց համար ունեցաւ նաեւ մի յաւելեալ անպատահութիւն, որը բխում էր հայ սոց. — դեմոկրատներէ այն ժամանակէ կազմակերպական վիճակից: Խնդիրն այն է, որ այդ պահին նրանք դեռեւս չէին խզել իրենց կապերը վրացական կազմակերպութեան հետ եւ չունէին սեփական կուսակցական մարմիններ: Չկար, այսպիսով, նաև այն լիազօր կենտրոնը, որ կոչւած էր ուղղութիւն տալու Հայաստանի իրենց ընկերների գործունէութեան: Ժողովրդականները ունէին այդպիսի մի մարմին, յանձինս իրենց Կենտրոնական Կոմիտէի: Հայ սոց. — դեմոկրատները չունէին այդ մարմինը եւ, այսպիսով, բարձրագոյն ղեկավարութիւնը մնում էր «կամօքն Աստուծոյ» ընտրւած մարդկանց ձեռքին, որոնք իրաւասութիւններից օգտւելու լայն յարմարութիւնների միացնում էին պատասխանատուութիւնից խուսափելու նոյնքան լայն պատեհութիւնները: Այսչափ սխալ սկսած գործը չէր կարող չուենալ իր հետեւանքները ընդամադիր այս խմբակի ապագայի համար: Եւ ինչպէս կը տեսնենք յետոյ, այդ հետեւանքները իրօք որ շատ ծանր նստեցին հայ սոցիալ-դեմոկրատիայի վրա:

Այժմ անցնենք մեր կուսակցութեան՝ հայ սոցիալիստ-յեղափոխականներին: Յեղափոխութեան ազգայնացումը ամենածանր անդրադարձումն ունեցաւ հայ էսէնների վրա: Փոխարքայի պալատից Արամեանցի տունը փոխադրուելիս մենք մէկէն մէկ զգացինք, որ մի շատ կարեւոր բան պակասում է մեզ՝ մենք չուենէինք անւանի, հեղինակւոր եւ հայ իրականութեան մէջ համբաւ հանած ղեկավարներ: Մեր բոլորի կողմից ճանաչւած պարագլուխը՝ Լեւոն Աթաբէկեանը սպանել էր Բաղուամ մի քանի ամիս առաջ: Անջատական շարժման օրերին (1907—1908 թ.թ.) առաջնակարգ դերքի հասած մեր միւս ընկերը՝ Վահան Մինասյանը, որ Սիրիից Տաճկաստան էր փախել, խտուել էր այնտեղ արքայի քարաւանդներին եւ կորած էր համարւում մեզ համար: Նոյն այդ անջատական շրջանում աչքի ընկնող մի քանի ուրիշ ընկերներ, զժրախտաբար, 1917 թ. յեղափոխութեան ժամանակ որեւէ նկատելի յառաջադիմութիւն ցոյց չուէին ու երկրորդական գործիչի դերքերից անդին չանցան: Ինչ վերաբերում է մեր այն ընկերներին, որոնք անուն հանե-

ցին 1917 թ. յեղափոխութեան ժամանակ Թիֆլիզում (Ն. Թարխանեան, Լ. Թումանեան) եւ Բագում (Ս. Սահակեան), դրանք մնացին գործելու ընդհանուր կազմակերպութեան շարքերում՝ հայ իրականութեան բաւականաչափ ծանօթ չլինելու պատճառով: Այսպիսով, վճռական այն բուկին, երբ մեր առջ զբւեց Ազգային Խորհրդի հետ միասին Երեւան տեղափոխելու հարցը, մենք Թիֆլիզում չունէինք կենտրոնական դէմքեր, եւ Հայաստան կարող էինք ուղարկել այնպիսի գործիչներ, որոնք իրենց տեսակարար կշիռով ոչնչով բարձր չէին Երեւանում գտնուող մեր ընկերներից: Այս հանգամանքը ոչ միայն դիւրացրեց Թիֆլիզից «երկիր» մեկնող ընկերների ընտրութիւնը, այլ նաեւ պատճառ դարձաւ, որ Հայաստանի գործերը վարելու կոչւած լիազօր կենտրոնի հարցը — որ ճակատագրական դեր կատարեց ժողովրդականների եւ սոցիալ-դեմոկրատների համար, — այս դէպքում բարեբախտ լուծում ստանայ: Այդ լուծումը բխում էր այն միակ ուղիղ տեսակէտից, թէ Հայաստանի գործունէութիւնը պէտք է վարեն Հայաստանում գտնուող մարդիկ: Բայց որպէսզի դրա կիրառումը կեանքում չտանէր Հայաստանի մեր կազմակերպութեան ձեւական անջատման ու բացարձակ անկախացման — մի բան, որ ոչ ոք մեզանից չէր ցանկանում — Երջանային Կոմիտէն Երեւան մեկնող ընկերքը (Ա. Սոնդկարեան) տաւ լայն լիազօրութիւններ ու արտօնեց նրան Հայաստանում գործել Երջ. Կոմիտէի անունով ու օգտուել նրա բոլոր իրաւասութիւններով: Այս քայլը, անշուշտ, անհամապատասխան էր մեր ներքին կանոնադրութեան դեմոկրատական սկզբունքներին, բայց ժամանակը արտակարգ էր եւ պահանջում էր արտակարգ որոշումներ: Հետագային, մեկնակէտ ընդունելով նոյն այդ արտակարգ պայմանները, եւ փոխանցեցի Երջանային Կոմիտէի ինձ տւած լիազօրութիւնները խորհրդարանային մեր Ֆրակցիային, որը եւ — մինչեւ մեր կազմակերպութեան անդրանիկ ընդհանուր ժողովին ու Հայաստանի Կոմիտէի ընտրութիւնը — դարձաւ այն լիազօր մարմինը, որ ղեկավարեց հայ հսկաների ամբողջ գործունէութիւնը Հանրապետական Հայաստանում:

Ինչպէս վերոգրասուորեց Հայաստանում կուսակցական ուժերի փոխյարարերութիւնը վերոյիշեալ լծորդումից յետոյ:

Ինչպէս յայտնի է, դեռեւս Թիֆլիզում որոշեց կուսակցութիւնների ներկայացուցչութեան հարցը Հայաստանի ապագայ Խորհրդարանում: Ըստ կայացած համաձայնութեան, Դաշնակցութիւնը ստանում էր 18, իսկ մնացած էրեք կուսակցութիւնները (Ժողովրդական, Սոց. Յեղ., եւ Սոց.—Դեմ.) 6-ական ձայն: Արդարութիւնը

պահանջում է ասել, որ ուժերի այս բաշխումը չէր համապատասխանում իրականութեան, մանաւանդ եթէ կուսակցութիւնների տեսակարար կշռի որոշման համար չափանիշ ընդունենք նրանց այն ժամանակէլ անդամների ու համակիրների քանակը: Կասկածից դուրս է, որ Դաշնակցութիւնը շատ աւելի հետեւորդներ ունէր, քան միւս երեք կուսակցութիւնները միասին առած: Միւս կողմից, հաւասար չէին նաեւ այս երեքի ուժերը: Չնայած դրան շահագրգռած կողմերը չառարկեցին իրենց հանդէպ թոյլ տւած այս «անիրաւութեան» դէմ, եւ այդ՝ գլխաւորապէս այն պատճառով, որ իշխանութիւնը 1918 թ. յունիսեան դժնդակ օրերին այնպիսի՝ մի ծանր լուծ էր, որ ոչ ոքի համար որեւէ հրապոյր չէր ներկայացնում: Միւս կողմից, պէտք է աւելացնել նաեւ այն, որ միայն կողմնակիցների ու անդամների քանակով չէ, որ միշտ ու ամենուրեք չափւում է կուսակցութիւնների տեսակարար կշիռը: Կան դրա համար բազմաթիւ այլ գործօններ ու յատկութիւններ, որոնք, ի միջի այլոց, զօրութեան մէջ էին այն ժամանակ հայ էսէռների և էսդեկների համար, և որոնց շնորհիւ այս վերջիններին արժէքն ու նշանակութիւնը շատ աւելի բարձր էր, քան որ կարող էր թոյլ տալ նրանց անդամների քանակը: Այդ այդպէս էր, սակայն, Թիֆլիզում: Հայաստանում յիշեալ խմբակցութիւնների համար տարրեր պայմաններ ստեղծւեցին:

Երեւանում զգալի չափով փոխեց կուսակցական ուժերը փոխյարաբերութիւնը: Հ. Յ. Դաշնակցութիւնը, Թիֆլիզեան շրջանի համեմատութեամբ, է՛լ աւելի ուժեղացաւ, որովհետեւ Հայաստանում նա շատ աւելի բան ձեռք բերեց, քան կորցրեց, մինչդեռ նրա դէմ դանդաղ կուսակցութիւնները միայն կորցրին: Դաշնակցութիւնը նախեւառաջ ազատեց անդրկովկասեան այն նեղիչ միջավայրից, որի մէջ նա ընկել էր փետրւարեան յեղափոխութեան շնորհիւ ևւ որը, ինչպէս տեսանք, նրան դրել էր իր ուժին ու ազդեցութեան միանդամայն անհամապատասխան դերի մէջ: Միւս կողմից, Հայաստանում նա վերագտաւ կուսակցական մի կազմակերպութիւն, որ ունէր տասնեակ տարիների անցեալ ևւ խոր արժաններ էր ձգել հայ զանգրւածների մէջ: Վերջապէս, ինչպէս սուեց վերը, նա Հայաստան բերաւ իր ուժերի մեծ մասը, թողնելով Վրաստանում ու Ադրբէջանում շատ քիչ - քանակով ևւ որակով - գործիչներ:

Տարրեր եղաւ միւս կուսակցութիւնների բախար: Դրանցից հայ սոց.-յեղափոխականներն ու հայ սոց.-դեմոկրատները, Հայաստան գալով, կորցրին մէկէն այն բոլոր առաւելութիւնները, որ ունէին

Թիֆլիզում, մասնաւորապէս յեղափոխութեան առաջին շրջանում : Միջազգային կազմակերպութեան ընձեռած գործունէութեան լայն հնարաւորութիւնները վերացան նրանց համար : Վերջ դասն նաև այն բոլոր օժանդակութիւնները, որ նրանք ստանում էին իրենց մայր կուսակցութիւններից, որոնք ուժեղ էին քանակով ու մանաւանդ իրենց քաղաքական վարկով : Հայ էսէռները ու էսդեկները խմբակները Երեւանում յենեցին միայն այնտեղ եղած գաւառական թոյլ կազմակերպութիւնների վրա, որովհետև Անդրկովկասի կենտրոններում՝ Բաղուս եւ Թիֆլիզում՝ գործող բոլոր ուժերը (ոչ միայն օտար այլ նաեւ հայ) մնացին իրենց տեղերում եւ Հայաստան չեկան : Փաստօրէն այս երկու կուսակցութիւնների համար ոչ թէ ուժերի լրծորդում եղաւ, այլ ստեղծւեց մի կացութիւն, երբ պէտք էր ամէն ինչ կառուցանել վերստին, որդեգրելով, զրա հետ միասին, կազմակերպական նոր ձեւեր, կերտելով կուսակցական նոր մեքենայ ու հիմ ընդունելով միայն այն շատ համեստ ուժերը, որ կային Հայաստանում :

Յօգուտ դաշնակցականների փոխեց Երեւանում նաև ուժերի այն փոխյարարբութիւնը, որ կար Թիֆլիզում սրանց եւ ժողովրդականների միջեւ : Այն ամէնը, ինչով ուժեղ էին ժողովրդականները, մնաց Թիֆլիզում : Իսկ նրանց կազմակերպութեան ուժ էր տալիս Սոյուզակի հայ բուրժուազիան եւ մէկ էլ սպարազուխների բարձրագոյն անունները, որ նրանք ձեռք էին բերել նախայեղափոխական շրջանում ցոյց տաւ իրենց հասարակական գործունէութեամբ : Երեւանը չստացաւ ոչ մէկը եւ ոչ միւսը եւ մնաց սպաւերնած միայն տեղական կազմակերպութեան ուժին, որ նոյնպէս շատ թոյլ էր :

Ինչ վերաբերում է վերոյիշեալ կուսակցութիւնների զարգացման մօտակայ հեռանկարներին, ապա այդ կողմից էլ Հայաստանի այն ժամանակեայ պայմանները նպաստաւոր էին Դաշնակցութեան եւ աննրպաստ միւս կուսակցութիւնների եւ մասնաւորապէս էսդեկների ու էսէռների համար : Ինչպէս արդէն առիթ է եղել ասելու, Անդրկովկասեան ժողովրդների քաղաքական կեանքի զարգացումը ընթացել է «մէկ ազգ – մէկ կուսակցութիւն» նշանաբանի տակ : Ազգային հակամարտութիւնների սրման դէպքերում այս սկզբունքից շեղման ու մէկից աւելի կուսակցութիւններ կազմելու իւրաքանչիւր մի փորձ համարել է ոչ աւելի եւ ոչ պակաս, քան «ազգային դաւաճանութիւն» : Արդ, յիշեալ ժամանակաշրջանում, ազգամիջեան ընդհարումներն ու դժտութիւնները ծայրայեղ աստիճանի էին հասել եւ միւս կողմից մեծացել էր նաև արտաքին վտանգը, քանի որ թիւրքերը դանդաղ

էին Երեւանից եօթը վերստի վրա : Այս պայմաններում շատ դժւար էր խախտել վերը մասնանշած սկզբունքը եւ ընդդիմադիր կուսակցութիւններ հիմնել ու զօրացնել : Աննպաստ էին մեկ համար նաեւ Հայաստանի ներքին կեանքի պայմանները : Եթէ դեռ յեղափոխութիւնից առաջ Երեւանի շրջանը, որտեղ չկար զարգացած արդիւնաբերութիւն ու դասակարգային որոշակի շերտաւորում, ներկայանում էր անբարենպաստ գետին ընկերվարական կուսակցութիւնների համար, 1918 թիւն այնտեղ ստեղծւած դրութիւնը այդ կողմից է՛լ աւելի վատ էր : Բոլորին յայտնի գէպքերի հետեւանքով տակն ու վրա էր եղել հայ ժողովրդի ընկերային կառուցւածքը եւ այդ «անձեւ քօսը» մէջ կուլ էին դնացել մասնաւորապէս այն խաւերը, որոնք սովորաբար հիմք են ծառայում ընկերվարական կուսակցութիւնների համար : Եւ Երեւան գալու հէնց առաջին օրից մենք զգացինք, որ այստեղ պայմանները մեր գործունէութեան համար շատ աւելի դժւար են լինելու, քան Թիֆլիզում :

Աւելորդ է ասել, որ այդ «անձեւ քօսը», որպէս ընկերային միջավայր, շատ յարմար գետին էր «ամենայն հայց կուսակցութեան»՝ Հ. Յ. Դաշնակցութեան համար, որը երբեք չի եղել դասակարգային կազմակերպութիւն եւ իր լայն բացած դռներից ընդունել է, առանց մեծ խորութեան, բոլոր դասակարգերի ու խաւերի ներկայացուցիչներին :

Թող տարօրինակ չթւայ, եթէ ասենք, որ այդ օրերին միակ դասակարգային կուսակցութիւնը, որ յենում էր հասարակական որոշ խաւի վրա, Հայ ժողովրդական կուսակցութիւնն էր : Թէեւ սակաւաթիւ ու բաւականին բղկուած, բայց էլի կային Հայաստանի դիւզերում Դաշնակցութիւնից դուրս մնացած զանազան կուլակներ, «համբա»ներ, ոչսներ ու երէցփոխներ եւ՝ քաղաքներում՝ վաճառականներ ու հատ ու կենտ ցարական նախկին պաշտօնեաներ, որոնք եւ կազմում էին այդ կուսակցութեան ընկերային հիմքը : Այս տեսակէտից ալ ընդդիմադիրների հոսանքը շատ աւելի հաստատուն հող ունէր իր ոտքերի տակ, քան ընկերվարական կուսակցութիւնները : Եւ եթէ ժողովրդականները չկարողացան, այնուամենայնիւ, որոշ դեր խաղալ հայ քաղաքական կեանքում, այդ եղաւ բացառապէս նրանց ղեկավարների կատարած քաղաքական կոպիտ սխալների հետեւանքով :

Ընդդիմադիր կուսակցութիւնների տեսակարար կշռի նւազումը, որ տեղի ունեցաւ Երեւանում վերոյիշեալ պատճառներով, է՛լ աւելի ջցուն դարձրեց այն անհամապատասխանութիւնը, որ կար նրանց

ստացած պատգամաւորների թւի ու ներկայացրած ուժի միջեւ: Երեւանի քաղաքային ընտրութիւնները, որ կատարւեցին Ազգային Խորհրդի Հայաստան ժամանելուց մի երկու ամիս յետոյ, գործնականօրէն հաստատեցին վերը մատնանշած զրութիւնը: Դաշնակցութիւնը այդ ընտրութիւնների ժամանակ ստացաւ երկու անգամ աւելի ձայն, քան միւս երեք կուսակցութիւնները միասին: Հաշի չառնել այս փաստը ու նրանից համապատասխան կզրակացութիւն չհանել չէր կարող հայ ղեկավար կուսակցութիւնը: Բայց քանի չէին փոխւել Հայաստանի արտաքին պայմանները, քանի ղեռ թիւրքը նըստած էր Ուրուխանլում, Դաշնակցութիւնը բարւոք էր համարում յետաձգել իր կզրակացութիւնները աւելի բարեպատեհ ժամանակների, որոնք, ի դէպ, իրենց երկար սպասեցնել չաւին...:

Ինչ վերաբերում է կուսակցութիւնների հայ քաղաքական կեանքի մէջ զբաւած դիրքին, այդ ուղղութեամբ Երեւանում նոյնպէս տեղի ունեցան որոշ փոփոխութիւններ: Նախ եւ առաջ այստեղ վերջնականապէս ճշտւեց, թէ այդ կուսակցութիւններից ո՞րը սլտի համարել կառավարական եւ ո՞րը ընդդիմադիր: Քանի ղեռ գործում էր Ազգային Խորհուրդը, որպէս «զերազոյն ու միակ իշխանութիւն» եւ որի մէջ մասնակցում էին հայ բոլոր քաղաքական հոսանքների ներկայացուցիչները, խօսք չէր կարող լինել կառավարական եւ ընդդիմադիր կուսակցութիւնների մասին: Երբ Թիֆլիզում կազմւեց Յ. Քաջազնունու դահլիճը, որից դուրս մնացին վերոյիշեալ կուսակցութիւններից երեքը, մօտաւորապէս պարզւեց, որ զբանցից էլ բազկանալու է Հայաստանի սպառայ օպոզիցիան: Բայց այս հարցի փաստական լուծումը տեղի ունեցաւ միայն Երեւանում, երբ վերջնականապէս ճշտւեցաւ կառավ. կազմը: Յ. Քաջազնունին, յոյս ունենալով, որ կարող կը լինի իր նախարարութեան մէջ առնել դաշնակցականներից զատ՝ նաեւ ուրիշ տարրեր, կիսատ էր ձգել իր դահլիճի կազմը: Երեւանում, Ազգային Մարմինների վերակառուցման հետեւանքով, ստեղծւել էր մի դրութիւն, որ, կարծես թէ ընդառաջում էր Քաջազնունու ծրագրներին: Այնտեղ, Ազգային Խորհրդին կից, Արամի նախագահութեամբ կազմւել էր մի Գործադիր Մարմին, զուտ վարչական իրաւասութիւններով, որը փաստօրէն ոչ այլ ինչ էր, բայց եթէ կառավարութիւն եւ որի մէջ մտել էին դաշնակցականներից բացի, նաեւ Հայ Ժողովրդական Կուսակցութեան անդամները: Էսէսները եւ էսդեկները, շարունակելով իրենց մասնակցութիւնը Երեւանի Ազգային Խորհրդին, հրաժարւել էին մտնել Արամի «դահլիճի» մէջ: Յ. Քաջազնունու ճիգերը՝ մասնակից դարձնել իր կառավարութեան ժողովրդականներին եւ պահել գէթ Երեւանում ստեղծւած

մասնակի կռաւիւրտներ, յաջողութեամբ չպատկեցին: Թիֆլիզը իրեն յոյց տւեց այստեղ առաջին անգամ եւ ստիպեց Երեւանցիներին դուրս գալ կռաւիւրտներից ու դրաւել ընդզլմաղիրը դիրքեր: Գործելակերպի այս տարբերութիւնները ժողովրդական կուսակցութեան երկու հատուածները՝ Թիֆլիզի եւ Երեւանի՝ միջև շարունակեց նաեւ այնուհետեւ, արտայայտելով համարեա բոլոր կարեւոր հարցերի նկատմամբ: Դրա հետեւանքը եղաւ խիստ բացասական այս հոսանքի թէ վարկի եւ թէ գործունէութեան համար:

Բախտաւոր դուզադիպութիւն եղաւ էսէսները եւ էսպէկները համար նրանց երկու հատուածները տակտիկական նոյնութիւնը: Պէտք է այտեղ խոստովանեմ, որ մասնաւորապէս եւ մեծ անձկութեամբ էի սպասում այն ժամին, երբ կը հանդիպեմ իմ Երեւանի ընկերներին ու կը ծանօթանամ նրանց որդեգրած ուղեգծին: Եթէ իմ եւ նրանց տեսակէտները օրւայ կարեւոր խնդիրները մասին շնորհաշատ կէին, մեր ազազայ գործունէութիւնը շատ մեծ բարգոյթիւնները կը հանդիպէր: Ես ներկայացնում էի Թիֆլիզի մեր կազմակերպութիւնը եւ ունէի, ինչպէս յիշեցի վերը, Շրջանային Կոմիտէի լիազօրութիւններ: Դրա դէմ Երեւանի մեր ընկերները փաստօրէն հանդիսանում էին այն միակ իրական ոյժը, որը այսուհետեւ պէտք է հիմք ծառայէր մեր կազմակերպութեան հետագայ գոյութեան ու գործունէութեան համար: Բախտաւոր իմ եւ նրանց մէջ կարող էր Հայաստանի մեր կազմակերպութիւնը դնել փակուղու առաջ, մասնաւոր, որ հաղորդակցութեան բացակայութեան պատճառով՝ անհնարին էր սրելէ միջամտութիւն դրսի գերադաս մարմինների կողմից: Բայց առաջին իսկ օրը տեղի ունեցած հանդիպման ժամանակ պարզեց, որ մեր երկու հատուածների տակտիկական ըմբռնումներն ու որդեգրած ուղեգիծը միանման են: Այս հանգամանքը, ի միջի այլոց, դիւրացրեց նաեւ մեր բռնելիք դիրքի ճշտումը, եւ Հայաստանի նորաստեղծ Հանրապետութեան մէջ մեր կուսակցութիւնը վերջնականապէս գրաւեց ընդդիմադիր դիրք:

Դիւրին եղաւ նաեւ Դաշնակցութեան երկու հատուածների գործելակերպի զօդումը, քանի որ թէ Թիֆլիզում եւ թէ Երեւանում այդ կուսակցութիւնը գործել էր որպէս զեկալար ոյժ ու դրանով կանխորոշել իր դիրքը Հայաստանի նորաստեղծ պետական կեանքում: Լինելով ամենաուժեղ կուսակցութիւնը եւ ունենալով իր յետեւից քաղաքականապէս կազմակերպւած զանգւածների մեծամասնութիւնը, անկասկած է, որ Դաշնակցութիւնը, — լինի մենակ թէ ուրիշ ուժերի հետ — պէտք է դառնար կառավարական կուսակցութիւն: Այդ մասին միատեսակ էին մտածում թէ Թիֆլիզի եւ թէ Երեւանի

հատուածները, եւ, սխալած չեմ լինի, եթէ ասեմ, որ նաեւ աշխարհի բոլոր դաշնակցականները :

Ահաւասիկ այն քաղաքական կաղձակերպութիւնները, որ հայ նորաստեղծ պետական կեանքի շարժիչ ուժերն հանդիսացան 1918 թ. աշնան բախտորոշ օրերին : Շարունակելով մեր խօսքը դրանցից ընդդիմադիր խմբակների մասին, անհրաժեշտ է պարզել եւս մէկ հարց — Ինչպէս պէտք է բնորոշել Հանրապ. Հայաստանի օպոզիցիան, իր գործելակերպի ու գաղափարաբանութեան տեսակէտից :

Այս հարցին ճիշտ պատասխանելու համար պէտք է կանգ առնել ընդդիմադիր կուսակցութիւններից իւրաքանչիւրի վրա առանձին : Այդպէս վարելի պէտք է մասնաւորապէս այն պատճառով, որ նրանք երբեք և ոչ մէկ ձեւով չենքդաշնակեցին իրենց գործունէութիւնը, ձեւական րլոքներ, «միացեալ ցակառններ» կամ նոյն իսկ ad hoc համաձայնութիւններ կայացնելով : Բլոքներ ու համաձայնութիւններ չկնքեցան ոչ միայն աջ եւ ձախ ընդդիմադիրների, այլ նոյն իսկ երկու ընկերվարական խմբակների միջեւ : Այսպիսով ընդդիմադիր գործելակերպն ու գաղափարաբանութիւնը չեղաւ միատեսակ, ինչպէս յաճախ փորձում են ներկայացնել ամէն ինչ «կարճ կապել» սիրող մեր հրապարակագիրները : Անհրաժեշտ է մասնանշել նաեւ այն, որ Հանրապետութեան 2½ տարւայ կեանքը ունեցաւ տարբեր շրջաններ, որի ընթացքում տեղի ունեցան փոփոխութիւններ ինչպէս կառավարական կուսակցութեան ընդհանուր քաղաքականութեան, նոյնպէս եւ օպոզիցիայի անձնական կազմի ու գործելակերպի մէջ : Թիւրիմացութիւններից խուսափելու համար, պէտք է նաեւ ճշտորոշել ամէն անգամ, թէ խօսքը ո՞ր շրջանին է վերաբերում : Ինչպէս արդէն նկատած կը լինի ընթերցողը, իմ այս յօդածի մէջ եւ ի նկատի ունեմ Հանրապետութեան կեանքի առաջին շրջանը, որ սկսւում է Խորհրդարանի բացումով ու վերջանում՝ Յ. Քաջաղունու առաջին դահլիճի տապալումով :

Այս երկու գիտողութիւններից յետոյ, անցնենք այժմ վերը առաջադրած հարցի պատասխանին, սկսելով աջ օպոզիցիայից, որի միակ ներկայացուցիչն էր Հանր. Հայաստանում Ժողովրդական կուսակցութիւնը :

Այս կուսակցութեան երկու հատուածների (Թիֆլիզի եւ Երևանի) միջեւ, ինչպէս առիթ եղաւ մասնանշելու, կար տեսակէտների որոշ տարբերութիւն դաշնակցականների հետ համադործակցելու, կառավարութեան մէջ մտնելու եւ նման մի շարք ուրիշ հարցերի շուրջը : Երևանցիք շատ աւելի չափաւոր տրամադրութիւններ ունէին, քան Թիֆլիզում գործող պարագլուխները : Բայց որովհետեւ այս վերջինն—

րըս չեկան Հայաստան, և կուսակցութեան գործունէութեան ղեկավարութիւնը մնաց, այսպիսով, Երեւանցիներէից կազմուած մեծամասնութեան ձեռքում, Ժողովրդականների օպոզիցիան էլ, մանաւանդ յիշածս առաջին շրջանում, եղաւ վերին աստիճանի չափաւոր: Ամենավրճառական բոպէին, նորակազմ կառավարութեան յայտադրել ընթերցումից յետոյ, Ժողովրդականների Փրակցիան՝ ձայների մեծամասնութեամբ՝\*) քէարկից յօգուտ Յ. Քաջազնունու դահլիճի, որով, փաստօրէն, նա դուրս եկաւ օպոզիցիայի շարքերից ու միացաւ այն մեծամասնութեան, որի վրա այնուհետեւ յենեց կառավարութիւնը: Ճիշտ է, պարլամենտական ու կուսակցական գործունէութիւն վարելու անփորձութիւնը դարձրեց Ժողովրդականների հետագայ գործելակերպը դարձդարձիկ, բայց անգամ իրենց այն ելոյթների մէջ, որոնք կրում էին ընդդիմադիր բնոյթ, նրանք մնացին միշտ լեզուալութեան սահմաններում և երբեք չչեղեցին պատասխանատու ու չափաւոր օպոզիցիայի գերբից:

Անցնելով այժմ ձախ ընդդիմադիրներին, ես յաջորդական կարգով կանգ պիտի առնեմ նախ սոցիալ-լեզուափոխականների վրա, որովհետեւ սոցիալ-դեմոկրատները, մի զարմանալի նախանձախընդրութեամբ, ձգտեցին իրենց վերապահել Հայաստանի խորհրդի ամենաձախ խմբակցութեան պատիւը: Դրա դէմ մենք չառարկեցինք անցեալում, և չեմ առարկում նաեւ ես այժմ:

Մեր կուսակցութեան ընդդիմութիւնն ևս այս շրջանում եղաւ պատասխանատու: Այս բնորոշման էութիւնն ու բովանդակութիւնը կարծում եմ պարզ է: Արտասահմանեան ընթերցողները, որոնք բոլոր հնարաւորութիւնները ունեն դիտելու պարլամենտական երկրների խորհրդարանային կեանքի անցուղարձեքը, դիտեն, անշուշտ, թէ ի՞նչ տարբերութիւն կայ պատասխանատու և անպատասխանատու օպոզիցիաների միջև: Ինչպէս յայտնի է, անպատասխանատու ընդդիմադիրները, հետեւելով յեզուափոխական տակտիկայի, իրենց ամբողջ ուշադրութիւնն ու եռանդը կենտրոնացնում են արտապարլամենտական գործունէութեան վրա, աշխատելով դրսում, զանգուածների հետ անմիջական շփման միջոցով, կազմակերպել այն մարտական ոյժը, որը պէտք է մի օր փողոց հանել՝ իշխանութեան տիրա-

\*) Ժողովրդական Փրակցիայի վեց անգամից երկուսը ձեռնպահ մնացին, եւ այդ ոչ թէ այն պատճառով, որ դէմ էին Յ. Քաջազնունու դալիլին, այլ որովհետեւ գտնում էին չափազանցած Յ. Քաջազնունու այն պահանջը, թէ վստահութեամբ բանձնելն մէջ որեւէ պայման կամ վերապահում չպիտի լինի եւ նա պետք է կրի բացարձակ բռնոյթ:

նալու համար: Եւ եթէ նրանք դնում են այնուամենայնիւ պարլամենտ, ապա ոչ թէ այնտեղ օրդանական աշխատանք կատարելու, այլ օգտագործելու համար խորհրդարանային ամբիոնը ու այնտեղից իրենց խօսքը ուղղելու դրսի զանգաճներին, ինչպէս ասում են «պատգամաւորները գլխի վրայից»: Այսպիսի սահմանափակ դեր վերապահելով իրենց, անպատասխանատու ընդդիմադիրները չեն մասնակցում ոչ պարլամենտական յանձնաժողովներին, և ոչ էլ օրինագծերի նախապարաստական աշխատանքներին: Յատկապէս ճախ ընդդիմադիրները - սոցիալիստները ու կոմմունիստները - հրաժարւում են քէտարկել ընդջէն և մանաւանդ զինուորական նախարարութեան վարկերը:

Եթէ այսպէս է անպատասխանատու օպոզիցայի գործելակերպը, ապա ամենայն վստահութեամբ կարող եմ ասել, որ մենք անպատասխանատու ընդդիմադիրներ չէինք ոչ Հայաստանի Խորհրդում և ոչ էլ, առ հասարակ, Հայաստանում: Աւելորդ է մասնանշել, որ մեր ամբողջ գործունէութիւնը կրում էր բացարձակապէս լեգալ բրնոյք և կենտրոնացած էր մեծ մասամբ Խորհրդարանում: Բացի արդ, մենք մասնակցում էինք պարլամենտական բոլոր յանձնաժողովներին, մէջն առնելով նաեւ զինուորականը, ինչպէս նաեւ բոլոր օրինագծերի քննութեան, ջանալով մեր ելույթներով ոչ թէ այդ օրինագծերի թերութիւնները ընդգծել միայն, այլ նաեւ մեր ուղղումները անել ու, այդպիսով, աւելի կատարեալ օրէնքների հրատարակման նպատակ: Անշուշտ մենք քննադատում էինք նաեւ կառավարութիւնը - օպոզիցիան արդէն ամէն տեղ նոյնն է անում - բայց այդ քննադատութեանց նպատակը ոչ թէ իշխանութեան քայքայումն էր, այլ մի աւելի կատարեալ ու մեր իղէպներին աւելի համապատասխան իշխանութեան ստեղծումն:

Ես պէտք է այստեղ առանձնապէս շեշտեմ, որ պատասխանատու օպոզիցիային մենք փարեցինք գիտակցաբար\*) և հակառակ այն տակտիկական թելադրանքներին, որ իր մէջ պարունակում էր մեր ստացած քաղաքական ժառանգութիւնը, մի ժառանգութիւն, որ կը-

\*) Ֆինանսների նախարար և Կարնիկեանի յիշատակին նիւրաձ Հայաստանի Խորհրդի պաշտօնական նիստում մեր փրակցիայի նախագահը, իր խօսքի մէջ, կանց առնելով օպոզիցիայի տարբեր տեսակների վրա և մատնանշելով, որ կայ «օպոզիցիա նորին մեծութեան դէմ» և «նորին մեծութեան օպոզիցիա», յայտարարեց, որ եթէ սոց.-յեղափոխականները այս վերջին տեսակի ընդդիմադիրներից են, դրա պատճառներից մէկն էլ այն է, որ կառավարական կուսակցութիւնը իր շարքերում ունեցել է այնպիսի մի գործիչ, ինչպիսին է և Կարնիկեանը:

տակում էր մեզ մայր կուսակցութիւնը Պետական Դումայում ունեցած իր գործունէութեամբ ձեռք բերած փորձի եւ Սոցիալիստական Ինտերնացիոնալի համազումարներում ընդունած որոշումների հիման վրա :

Այս շեղումը, որ մենք կատարեցինք Հայաստանում ստեղծւած իրայատուկ պայմանների ազդեցութեան տակ, առանց որոշ անհարթութեանց չէր, որ տեղի ունեցաւ : Որքան էլ փոքրաթիւ, բայց եւ այնպէս մեր Փրակցիայի ներսում կային կարծիքների ու տրամադրութիւնների տարբերութիւններ, որի հետեւանքով մեր որոշումները զանազան սկզբունքային ու տակտիկական խնդիրների շուրջ տեղի էին ունենում մտքերի թեր ու զէմ փոխանակութիւնից յետոյ ու ձայների մեծամասնութեամբ : Այս ձեռով էր, որ լուծուեց նաև մեր գործելակերպի ընդհանուր ուղղութեան հարցը :

Այժմ մնում է մի երկու խօսք ասել ընդդիմադիր վերջին խմբակի՝ հայ սոցիալ-դեմոկրատների տակտիկայի մասին : Պիտի խոստովանեմ, որ դրա բնորոշումը այնքան էլ դիւրին չէ ինձ համար : Սոցիալ-դեմոկրատների գործունէութիւնը տեսալ շրջանում զուրկ եղաւ հետեւողական ուղեգծից : Պատճառը նրանց խորհրդարանային Փրակցիայի այլատարրութիւնն էր ու նաեւ ղեկավար ձեռքի պակասը : Հ. Ադատեանը (այժմ բոլշեւիկ), որ վարում է Փրակցիայի նախագահութիւնը, իր խառնւածքով ու ընդունակութիւններով միանգամայն անհամապատասխան էր նման մի ծանրակշիռ պաշտօնի համար : Շատ քիչ անգամ հաշի առնելով իր ընկերների տրամադրութիւնները ու տալով իր ելոյթներին յաճախ անձնական բնոյթ, նա դրանով ստիպում էր իր Փրակցիայի անդամներին երբեմն խանդարել կուսակցական կարգապահութիւնը ու ամբիոն բարձրանալ արտասանելու համար ճառեր, որոնք իրենց տոնով ու բովանդակութեամբ չէին ներդաշնակում նախագահի ասածներին : Այս անհարթութիւնները շեշտւած ձեռով արտայայտեցան մանաւանդ այն ժամանակ, երբ Թիֆլիզից՝ Փրակցիայի կազմը ուժեղացնելու համար՝ Երեւան եկան Արկոմեդը (Գ. Ղարաջեան) ու Միք. Ղարաբէգեանը : Գրաւելով կուսակցութեան մէջ աւելի կարեւոր դիրք, քան Հ. Ադատեանը, սրանք, բնականաբար, չուղեցան սեղմել Փրակցիայի սոսկական անգամի համեատ շրջանակի մէջ ու, ամէն անգամ, խորհրդարանի ամբիոն բարձրանալիս, ներկայացան ղեկավարի ու պարզլիսի դերում : Կուսակցական գծի միօրինակութիւնը զբանից տուժեց մեծապէս : Այսպէս թէ այնպէս, հայ սոց. -դեմ. Փրակցիայի գործունէութիւնը դրոշմել է այն ժամանակուայ անցուղարձերի անմիջական վկաների յիշողութեան մէջ որպէս ծայրայեղ ընդդիմու-

քիւն: Չառարկելով դրա դէմ ընդհանրապէս, ես այնուամենայնիւ այն կարծիքին եմ, որ այդ ծայրայեղութիւնը աւելի շուտ ըստ ձևի էր, քան թէ ըստ բովանդակութեան: Քաղաքական տակտի բացակայութիւնը, մարքսիստական դախտրիմետրութիւնը ու միւսներէից աւելի ձախ երեւալու մոլուցքը շատ յաճախ ստիպում էին Սորճրդի սոց. — դեմոկրատ անդամներին ու մանաւանդ նրանց Փրակցիայի նախագահին արտասանել «փոթորկայոյզ» եւ երբեմն նոյն իսկ անպատշաճ ճառեր ու կատարել անպատասխանատու քէարկութիւններ, բայց դրանով հանդերձ, ես կարծում եմ, որ նաև այս խմբակի գործունէութիւնը իր ներքին բովանդակութեամբ ու, որ գլխաւորն է, իր հետապնդած նպատակներով աւելի ճիշտ կը լինէր համարել պատասխանատու քան թէ անպատասխանատու ընդդիմութիւն: Ամենավճռական վայրկեանին, Յ. Քաջաղնունու անդրանիկ կառավարութեան յայտադրի ընթերցումից յետոյ, սոց. — յեղափոխականների նրման նաեւ սոց. — դեմոկրատները ոչ թէ դէմ քէարկեցին ատջարկըւած վստահութեան բանաձեւին, այլ մնացին ձեռնպահ:\*) Սոց. — դեմոկրատների օպոզիցիայի բնոյթը որոշելու համար այս մէկ հատիկ քէարկութիւնը շատ աւելի արժէք ունի, քան նրանց արտասանած տասնեակ ճրճոան ճառերը:

Հանրապետական Հայաստանում գոյութիւն ունեցող օպոզիցիայի համեմատական չափաւորութիւնը արդիւնք էր ոչ թէ նրա ներկայացուցիչների քաղաքական առաքինութեան, այլ այն ժամանակւայ օրեկալիւ պայմանների: Ես այստեղ մանրամասն կանդ չեմ առնի այդ պայմանների վրա, քանի որ նրանք բաւականաչափ ծանօթ են հանրութեան: Կը յիշատակեմ դրանցից միայն մի քանիսը, որոնք ազդեցին ընդդիմադիրների գործունէութեան ուղղութեան վրա, պահելով այդ գործունէութիւնը համեմատաբար չափաւոր սահմանների մէջ:

Գլխաւորը դրանցից այն էր, որ շնորհիւ երկրում տիրող առանձնայատուկ վիճակի, նւազադոյնի էին հասել կուսակցութիւնների մէջ գոյութիւն ունեցող սկզբունքային տարակարծութիւնները: Մեր առաջ գրւած հիմնական խնդիրը՝ երկիրը հանել «անձեւ քասի» միջից շատ պարզ լուծում էր պահանջում: Միւս կողմից շատ սահմանափակ էին մեր բոլորի ձեռքի տակ եղած հնարաւորութիւնները: Այս հանգամանքը տեղ չէր թողնում խոչոր բախումների համար: Կար նաեւ այն խիստ կարեւոր պարագան, որ արտաքին ճակատի հարցը գերակշռող դեր էր կատարում այդ ժամանակ, երկրորդ

\*) Տես Ս. Վրացեանի «Հայաստանի Հանրապետութիւն» էջ 167:

կարգի վրա մղելով ներքին կեանքի բոլոր խնդիրները: Իսկ այդ հարցը այնպիսի մի ահռելի կոպտություն էր դրևած մեր առաջ, որ տարակարծություններ չէր վերցնում: Եւ, իսկապէս, ի՞նչ նոր ու իւրաքանչիւ լուծումներ կարող էին առաջարկել հայ զանազան կուսակցությունները մեր երկրին ու ժողովուրդին սպառնացող արտաքին վտանգի դէմ, բացի այն միակ հնարաւոր լուծումից, որ կոչուում էր «Ժամանակաւոր համակերպութիւն» եւ որը որդեգրել էր Յ. Քաջազնունու զահլիճը: Այսօր, երբ ես մտովին վերադառնում եմ մեր պատմութեան այդ շրջանը, աշխատելով վերյուշել այն ժամանակւայ դէպքերն ու տիրող մտայնությունը, ես չեմ կարողանում թրքական վտանգի շուրջը գտնել տարակարծութեան քիչ թէ շատ լուրջ կէտեր, որոնք գոյություն ունեցած լինէին կառավարական ու ընդդիմադիր կուսակցությունների միջեւ: Եթէ կային էլ տեսակէտների մի քանի աննշան տարբերություններ, ապա բաժանման գիծը անցնում էր ոչ թէ կառավարական ու ընդդիմադիր կուսակցությունաց, այլ այդ երկուսին էլ պատկանող գործիչներին միջեւ, ստեղծելով, այսպիսով, նոր խմբակցություններ, որոնք չէին ամփոփում կուսակցությունների շրջանակների մէջ: Յիշում եմ, որ այդ ժամանակ խօսք էր լինում երբեմն, թէ պէտք է Թիւրքիայի հանդէպ վարել մի քիչ աւելի ակտիւ քաղաքականություն, քան այն, որին հետեւում էր Յ. Քաջազնունին: Աւագների խորհրդի ու կառավարություն խառն նիստերից մէկում, երբ քննում էր թրքական զենայան Մահմեդ Ալիի Յ. Քաջազնունուն տւած անսպասելի այցելութեան ու ներկայացրած պահանջների (յայտնել մեր զօրքի քանակը, նրա կենտրոնացման կէտերը եւ այլն) հարցը, այս «մի քիչ աւելի ակտիւ քաղաքականություն» վարելու խնդիրը նորից հրապարակ դրեց, բայց հէնց այստեղ էլ կարծիքները բաժնեցին այնպէս, որ ես, (սոց. - յեղափոխ. Փրակցիայի նախագահը) և Ս. Կարճիկեանը (դաշնակց., կառավարութեան անդամ) մնացինք փոքրամասնություն կազմող «ակտիւիստներին» խմբակում, իսկ Յ. Քաջազնունին Հ. Ալպատեանի (սոց. - դեմոկր. Փրակցիայի նախագահ) ու միւսների հետ կազմեցին այն մեծամասնությունը, որ կողմնակից էր համակերպելու քաղաքականութեան: Պէտք է այն էլ ասեմ, որ մեր «ակտիւություն» բրնոյթն ու բովանդակությունը շատ անորոշ էր, այնպէս որ նրա տարբերությունը միւս խմբակի որդեգրած գործելակերպից այնքա՛ն էլ մեծ չէր:

Արտաքին քաղաքականություն ճակատում կային նաեւ Վրաստանի ու Ալբերջանի հետ մեր յարաբերությունները ճշտելու հարցերը, որոնց շուրջը գոյություն ունէին որոշ տարակարծություններ

կառավարական ու ընդդիմադիր կուսակցութիւնների միջև: Բայց յիշածս տաջին շրջանում այդ հարցերը այժմէականութիւն չէին ներկայացնում, կլանած լինելով թրքական վտանգի մղձաւանջով:

Գալով ներքին կեանքին, պէտք է մատնանշեմ այն կարեւոր պարտան, որ տւեալ շրջանում ընկերային հարցերը, որոնք սովորաբար «քար դայթակղութեան» են հանդիսանում շերտաւորման ենթարկւած հասարակութեան ծոցում ծնունդ առած կուսակցութիւնների համար, տեղի էին տալիս քաղաքական հարցերի առաջ: Սոցիոսոցիալական բարենորոգութիւնների մասին խօսք լինել չէր կարող այնպիսի մի պայմաններում, երբ պէտք էր ավի յախոյ պետական մեքենայ ստեղծել, պարենաւորման դործը կարգաւորել ու զաղթականութեան յորձանքները որոշ հունի մէջ ամփոփել: Միւս կողմից, ինչպէս մատնանշեցի վերը, հայ կուսակցութիւնները, որոնց թւում նաեւ ընկերավարական զոյգ կազմակերպութիւնները, դեռ չէին կարողացել լծորդւել հասարակական այն խաւերի հետ, որոնց վրա նրանք սովորաբար յենում են: Մեր զաղափարախօսութիւնն ու տակտիկան մշակելիս մենք թելադրանքներ չէինք ստանում իր որոյն շահերի գիտակցութեամբ առւելցուն հայ կազմակերպւած բանւորութեան ու աշխատաւորական զանգաձներից եւ այդ՝ նախեւառաջ այն պարզ պատճառով, որ «անձեւ քօսօր» թոյլ չէր տալիս, որ կաղապարւի հայ ընկերային կառուցւածքը եւ ձեւ ու մարմին ստանան հասարակական վերոյիշեալ խաւերը: Իսկ եթէ երբեմն մեղանից մէկն ու մէկը՝ զաղափարական մղումներով տարւած, փորձում էր ընկերային բարենորոգումների պահանջ դնել, ապա կառավարական կուսակցութիւնը այնպիսի արագութեամբ էր միանում մեր այդ մեծ մասամբ տեսական նշանակութիւն ներկայացնող պահանջին, որ վէճի ու պայքարի ոչ մի տեղ չէր մնում: Չպէտք է մոռնալ, որ ուսական յեղափոխութեան ազդեցութիւնը դեռ զօրեղ էր հայ բոլոր կուսակցութիւնների, որոնց թւում նաեւ Դաշնակցութեան վրա, որը այդ ժամանակ, էլի մէկ անգամ ապրում էր իր սոցիալիստական մեղրալուսնի շրջանը:

Սկզբունքային սուր տարակարծութիւններ չկային նաեւ քաղաքական մարդում գոյութիւն ունեցող ինդիւրների շուրջ: Ամենահիմնական հարցի՝ նորաստեղծ պետութեան ներկայի ու ապագայի հանդէպ միատեսակ վերաբերմունք ունէին այդ շրջանում թէ կառավարական եւ թէ ընդդիմադիր կուսակցութիւնները: «Մեր հանրապետութիւնը փոքր է ու նեղ իր սահմաններով. նա զրկւել է իր ամենազնահատելի երկրամասերից ու չի կարող իր մէջ տեղաւորել ամբողջ ազգաբնակութիւնը եւ, կարծես թէ, պայմաններ չունի անկախ

գոյութեան համար» (ընդգծումներն իմն են՝ Ա.Պ.), ասում է իր բացման ճառի մէջ Աղբ. Խորհրդի նախագահ Աւ. Սահակեանը, եւ այս դեհատութեան հետ համաձայն էինք մենք բոլորս: Կարող էինք սրանից յետոյ խոշոր ծրագիրներ առաջարկել ու դրանց շուրջը կուսակցական «գոռ մարտեր» մղել: Ի հարկէ ոչ: Եւ կասկածոտ մօտիկ ապագայի նկատմամբ ու զուրկ մխիթարական հեռանկարներից, մենք ապրում էինք օրը օրին, աշխատելով որքան կարելի է շուտ ստեղծել այն անհրաժեշտ մեքենան, առանց որի անհնարին է որեւէ մէկ ժողովրդի համակեցութիւնը: Այս էր ահա օրւայ մինակարեւոր հարցը եւ սրա շուրջն էին տեղի ունենում նաեւ ընդդիմադիրների քննադատութիւնները:

Մեքենայի ստեղծման խնդրում մենք՝ ճախ օպոզիցիայի ներկայացուցիչներս երկու կարգի նախանձախնդրութիւն ունէինք: Նախ՝ պահանջում էինք, որ պետականութեան ժամանակաւոր շէնքը կառուցւի ղեմօկրատական սկզբունքների համաձայն եւ երկրորդ՝ հետամուտ էինք, որ վարչական, օրէնսդրական եւ միւս մարմինների գործունէութիւնը ընթանայ օրինականութեան սահմաններում: Ինչպէս մասնանշեցի, Դանակցութիւնը այդ ժամանակ ղեռ զտնւում էր սուսական յեղափոխութեան աղղեցութեան տակ եւ նրա ղեկավարները հաւատարմութիւն էին ցուցահանում ղեմօկրատական սկզբունքների հանդէպ: Սրա հետեւանքով Հայաստանի Հանրապետութիւնը եւ մասնաւոր նրա բարձրագոյն մարմինները կառուցեցին ռամկավարական հիմքերի վրա եւ կառավարական ու ընդդիմադիր կուսակցութիւնների մէջ տեսակէտների առանձին տարբերութիւններ չեղան Խորհրդարանի իրաւասութիւնների, կառավարական ու օրէնսդրական մարմնի փոխյարաբերութեանց վերաբերմամբ:

Ամենասուր մէծերը եղան, դիւստորապէս, պետական մեքենայի գործունէութեան շուրջը: Պարենի սուր տաքնապը, որ իշխում էր ամբողջ երկրում, հայ մտաւորականների անփորձութիւնը պետական պաշտօններ վարելու մէջ, ժողովրդի անկայուն վիճակը ու գաղթականութեան ալեկոծ ծովը ոչ միայն դժւարացնում էին կանոնաւոր վարչութեան ստեղծումն, այլեւ զեղծումների եւ ապօրինութիւնների լայն դուռ էին բացում ստորին մարմինների մէջ նստած պաշտօնեաների համար: Ինչպէս սովորաբար պատահում է բոլոր երկրներում, կառավարութիւնը յաճախ կամ չէր տեսնում եւ կամ տեսնելիս այլ կերպ էր նայում իր ստեղծած մեքենայի գոյութիւն ունեցող թերութիւնների վրա, եւ ընդդիմադիրներին էր մնում դրանց դէմ պայքարելու պարտականութիւնը: Հայաստանում հռչակ ստացած հարցապնդումը այն հատու զէնքն էր, որով մենք կուում էինք վե-

ըր մատնանշած ապօրինութիւնների դէմ: Եւ այս հարցապնդումների միջոցին էր, որ տեղի էին ունենում սուր բախումներ կառավարութեան ու կառավարական Ֆրակցիայի անդամների եւ ընդդիմադիրների միջեւ: Կանգնած այն հաստատ տեսակէտի վրա, որ օպօզիցիայի այս կարգի գործունէութիւնը վերջին հաշուով դրական ազդեցութիւն էր թողնում պետական մարմինների գոծառնութեան վրա, եւ չեմ կարող չմատնանշել նաեւ այն, որ այդ հարցապնդումներից մի քանիսը խորհրդարանում ստեղծում էին այնպիս մի մթնոլորտ, որ՝ մեր ժողովրդի ցածր իրաւագիտակցութեան պայմաններում, վընասում էր կառավարութեան եւ երբեմն նոյնիսկ իշխանութեան վարկին: Է՛լ աւելի խոտելի էին այն քննադատութիւնները, որոնք անձնական բնոյթ էին կրում, ուղղւած լինելով, մեծ մասամբ ներքին գործոց նախարարի՝ Արամի հասցէին: Պիտի արձանագրեմ, սակայն, այստեղ, որ վերջին տեսակի քննադատութիւնների հեղինակներ էին հանդիսանում մեծ մասամբ մեր հարեւան Ֆրակցիայի անդամները եւ մասնաւորապէս նրա հռչակաւոր նախագահը: Խորհրդարանի մեծամասնութիւնը, մէջը լինելով նաեւ միւս ընդդիմադիր խմբակները, համակրանքով չէին վերաբերում այդ կարգի ելոյթներին:

Եզրափակելով այս գլուխը, պիտի մատնանշեմ, որ Հայաստանի այն ժամանակեայ պայմանները անյաղթահարելի արգելքներ չէին ներկայացնում, որ Վրաստանի եւ Ալբանիայի նման, նաեւ Հայաստանի անդրանիկ կառավարութիւնը կազմէր բոլոր կուսակցութիւնների լայն համագործակցութեան հիման վրա: Եւ եթէ այդ տեղի չունեցաւ, պատճառը փնտռելու է այն միջկուսակցական բախումների մէջ, որոնք սկսեցին հայ կեանքում 1904-1905 թ. թ. ու շարունակեցին հետագայ տարիներում եւ որպէս «նղովեալ ժառանգութիւն» իրենց զբոյժը դրին հայ կուսակցութիւնների փոխարարութիւնների վրա նաեւ 1917-1919 թւականներին:

Փարիզ

